ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՄԻՆԻԱՅՈՒՄ

Վեհափառը՝ ավազանի անվամբ՝ Լևոն-Կարապետ Պալճյանը, ծնվել է 1908-ի սեպտեմբերի 20-ին (ն. տ.՝ հոկտեմբերի 3-ին) Ռումինիայի մայրաքաղաքում՝ Բուխարեստում: Հայրը՝ արհեստավոր-կոշկակար Աբրահամը, մայրը՝ ներհուն, բարեպաշտ ու խոնարհ տանտիկին Սիրանույշը, աստվածամեծար մարդիկ էին, որոնք իրենց անդրանիկ որդուն մեծացրին ազգային-եկեղեցական բարի ավանդույթներին համապատասխան: Վեհափառի հայրն ու պապն իրենց հանապազօրյա հացը վաստակել են արդար տքնանքով: Վարպետ Աբրահամը բնիկ թեքիրդաղցի էր[1], որ 1895-1896 թվականներին՝ «Կարմիր սուլթանի»՝ Աբդուլ Համիդ Երկրորդի կողմից հրահրված հայկական առաջին կոտորածների ժամանակ, իր եղբայրների և քույրերի հետ միասին գաղթում է Ռումինիա ու հաստատվում Բուխարեստում: «Հայրս՝ Աբրահամ, ծնված Ռոտոստոյում, համեստ ընտանիքից, 22 տարեկանում եկել է Պոլիս և իր արհեստով է զբաղվել՝ կոշկակարությամբ, նախ աշկերտ լինելով ինչ-որ վարպետի մոտ: Թեև կիսագրագետ մի մարդ էր, բայց այն ժամանակվա ազգային ազատագրական շարժմանն իր մասնակցությունը բերած էր (նա հնչակյան կուսակցության անդամ էր - Լ. Պ.), հատկապես մասնակցած էր Բաբա Ալիի փողոցի հայտնի ցույցին Կոնստանդինուպոլսում... Բուլղարիան բարյացակամ էր գտնվում և այդպիսի հեղափոխական փախստականների ընդունում էր իր երկիրը: Հայրս մի քանի ամիս ապրած է Վառնա քաղաքում՝ նավահանգստում սևագործ աշխատանք կատարած և հետո տեղափոխված Բուխարեստ՝ իբրև կոշկակար իր աշխատանքը շարունակելու համար այնտեղ»[2],- հետագայում այսպես պիտի հիշեր հորը վեհափառ հայրապետը: Գաղթի ծանր օրերին Պալճյանների ընտանիքը կազմում էին երեք եղբայրները, երկու քույրերն ու նրանց մայրը: Եղբայրները ձեռք ձեռքի տված լծվում են աշխատանքի և ապրում նահապետական նույն հարկի տակ, խաղաղ ու համերաշխ: Պալճյանների՝ Ռումինիայում հաստատ-

---

[1] Թեքիրդաղը կամ Թեք-Ֆուրդաղը հայտնի է նաև Ռոդոստո անվամբ և գտնվում է Թուրքիայի Մարմարածովյան վիլայեթում: Ներկայումս քաղաքում կան քրիստոնեական յոթ եկեղեցիներ, բազմաթիվ մզկիթներ և հունական վարժարան: Քաղաքը բոլորված է հրաշալի այգիներով: Նախկին հայաշատ քաղաքն այժմ ունի 18-20 հազար բնակչություն, որի գերակշիռ մասը հույներն ու թուրքերն են: Մանրամասն տե՛ս "Энциклопедический словарь" **Брокгауза Ф. А. и Ефрона И. А.** - С.-Пб.: Брокгауз-Ефрон 1890—1907. - С.-Пб.: Брокгауз-Ефрон 1890-1907.

[2] «Ոգեղեն կյանք (Վազգեն Առաջին վեհափառ հայրապետի ծննդյան 90-ամյակին)», Աշխատասիրությամբ Հովհ. **Պապիկյանի** և **Զ. Գալստյանի**, «Եղիր այն, ինչ որ պետք է ըլլաս», Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1998, էջ 5:

վելուց տասը տարի անց՝ 1907-ին, Աբրահամն ամուսնանում է բնիկ էդիրնեցի[3] մի օրիորդի՝ Սիրանույշի հետ: Վերջինս շրջապատում մեծ հարգանք վայելող ուսուցչուհի էր՝ «Սիրանույշ վարժուհի»[4] համեստ կոչմամբ: Աչքի էր ընկնում անհուն բարությամբ, առաքինությամբ ու բարեխղճությամբ: Նախքան Ռումինիա մեկնելն օրիորդը յոթ տարի ուսուցչություն էր արել Ռոդոստոյի հայոց Ս. Թագավոր և Ս. Խաչ թաղի ազգային վարժարաններում:

Պալճյանների ընտանիքը 1913-ին տեղափոխվում է Կ. Պոլիս: Լևոն-Կարապետն այնտեղ նախ հաճախում է Կետիկ փաշայի ազգային մանկապարտեզը: Երեխան առաջին անգամ հայոց այբուբենն արտասանում է մոր ծնկներին: Մանկավարժական հնարքներին քաջահմուտ տիկին Սիրանույշը մի առանձին եռանդով է ստանձնում որդու դաստիարակության պատասխանատու գործը՝ համակված Հայաստանյաց եկեղեցու ճշմարիտ հավատով, մայրենի լեզվի քաղցրությամբ և ազգասիրության շնչով ու ոգով: Ասել է թե՝ գորովագութ մայրը բացառիկ ազդեցություն է թողել որդու նախադպրոցական դաստիարակության վրա, նրան նախապատրաստել մայր հայրենիքին արժանավոր զինվոր պարգևելու նվիրական գործին: Հեռավոր օրերից մեզ է հասել մոր՝ վեցամյա որդու լուսանկարի դարձերեսին թողած մի մակագրություն, որն ամենից առաջ խոսում է հայրենասեր հայուհու անկեղծ ու ազնիվ զգացումների մասին.

«Անունս է Լևոնի՛կ, //Բոլորած եմ վեց տարիք.//Մաղթեցէք դուք ի սրտէ՝// Աստուած զիս անփորձ պահէ, //Որ ես ըլլամ քաջ, արի //Զինուոր Մայր Հայաստանի»[5]:

1914-ի գարնանը Լևոն-Կարապետը ծնողների հետ վերադառնում է Ռումինիա, ուր մինչև 1916-ը հաճախում է տեղի հայկական ազգային մանկապարտեզը: 1916-ի ծմռանից՝ Առաջին աշխարհամարտին Ռումինիայի մասնակցության շրջանից, տեղի հայության նկատմամբ սպասվող վտանգից դրդված, Պալճյան ընտանիքը տեղափոխվում է Ռուսաստանի Կայսրություն, ուր Օդեսա նավահանգստային քաղաքի հետնախորշերից մեկում (Կուզնեչնայա փողոց) ապաստանում է մինչև 1919 թվականը: Վեհափառ հայրապետն այդ առիթով հիշում է հետևյալը. «Նախօրյակին, հայերը, որ բնակվում էին Բուխարեստում, վախենալով, թե գերմանացիք պիտի մտնեն ու նրանց հետ նաև թուրքերը, և հայերին պիտի հավաքեն ու տանեն Թուրքիա՝ կոտորեն, որովհետև շատերը 15 թվից

---

[3] Էդիրնե (նախկինում՝ Ադրիանուպոլիս) – քաղաք Թուրքիայի եվրոպական մասում՝ Բուլղարիայի հարևանությամբ: Ժամանակին այնտեղ էր ծնվել նաև հանճարեղ երգիծաբան Հակոբ Պարոնյանը (1843-1891): Ադրիանուպոլսի հայ գաղթօջախի մասին մանրամասն տե՛ս Աղասյան Հ., Ադրիանապոլսո հայ գաղութը, Բլոմֆիլդ, 1935:

[4] Տե՛ս Վազգեն Ա Հայրապետ Հայոց, Կենսագրություն, կոնդակներ, քարոզներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1958, էջ 9:

[5] «Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց. Նվիրվում է մահվան 10-րդ տարելիցին», հրատարակության պատրաստեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժինը, Ս. Էջմիածին, 2005, 240 էջից հետո:

հետո Թուրքիայից էին գաղթել, և համարյա թե բոլոր հայերը՝ թողնելով ամեն ինչ, փախան դեպի Ռուսաստան: Մենք էլ՝ նույնպես: 16-ի ծմեռը սաստիկ ցուրտ էր, հիշում եմ, դժվարությամբ հասանք Օդեսա: Հեռավոր մի ծայրամասում գտնվող համեստ մի սենյակում բնակվեցինք, և հայրս այնտեղ էլ կոշկակարությամբ զբաղվեց: ...Հայրս կարողացավ իր արհեստով մեզ պահպանել»[6]:

Երեխայի հայեցի դաստիարակության գործը սիրով շարունակում է մայրը: Նյութական անձուկ վիճակում հայտնված ընտանիքը, սակայն, լավ հասկանալով կրթության հարգը, միջոցներ չի խնայում որդու մտավոր զարգացման համար. Լևոն-Կարապետը մասնավոր դասեր է ստանում ուսուցիչ Աշոտ Սպանդարյանի մոտ[7], նաև հաճախում արձակագիր Արմեն Շիտանյանի տնօրինության ներքո գտնվող հայկական նախակրթարանի ամառային դասընթացներին: Ինչպես ժամանակի շատ հայ ընտանիքների, այնպես էլ Պալճյանների համար ռուսական տարագրությունը հանապազօրյա հաց հայթայթելու հոգեմաշ շրջան էր: 1919-ին՝ պատերազմի ավարտից անմիջապես հետո, Պալճյանները վերադառնում են Ռումինիա: Այդ ընթացքում Լևոն-Կարապետն արդեն աչքի էր ընկնում ուսումնատենչությամբ և միտքը գիտության լույսով լուսավորելու ծարավով: Նախ՝ կրթություն է ստանում գերմանական «Ավետարանչական դպրոց» ("Evangelische Schule") կոչվող[8] նախակրթարան վարժարանում, ապա՝ ռումինական պետական դպրոցում և հետո՝ Բուխարեստի առևտրական բարձրագույն վարժարանում (1924-1928)[9]: Ծնողները կանգ չեն առնում ոչ մի զոհողության առջև՝ հանուն միակ որդու կրթության. գիշերուզօր տարբեր աշխատանքներ են կատարում, որպեսզի կարողանան հոգալ նրա ուսումնառության ծախսերը: Ուսմանը զուգահեռ՝ պատանին հաճախում է հայկական վարժարանին կից բացված հայոց լեզվի և գրականության գիշերօթիկ դասընթացներին՝ Գևորգ Ղազարյանի ուսուցչությամբ: Նա փոքր հասակից Բուխարեստում եղել է Հայ մարմնակրթական միության անդամ և մինչև 25 տարեկանն աշխատել այդ միությունում՝ նախ՝ որպես սկաուտ և ապա՝ ղեկավար անդամ: Հայտնի է, որ Լևոն-Կարապետին հայ ազգային շրջաններում ճանաչել են որպես «ասմունքի վարպետ». նա հմտորեն է արտասանել Հովհ. Թումանյանի, Դ. Վարուժանի, Մ. Մեծարենցի, Սիամանթոյի, Շ. Կուրդինյանի, Եղ. Չարենցի և այլոց երկերի բնո-

---

[6] «Եղիր այն, ինչ որ պետք է ըլլաս», «Ոգեղեն կյանք», Աշխատասիրությամբ Հ. Պապիկյանի և Զ. Գալստյանի, Ս. Էջմիածին, 1998, էջ 7:

[7] Տես Վազգեն Ա Հայրապետ Հայոց. Կենսագրություն, կոնդակներ, քարոզներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1958, էջ 10:

[8] Տես Ժամանակագրություն, Վազգեն Առաջին Կաթողիկոս Ամենայն հայոց, կազմեց Ս. Վանեցի, 1990, էջ 6:

[9] Տես Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԶ. Վազգէն Ա Պալճեան Ամենայն Հայոց Կաթողիկոս (1908-1994), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Մուղնի» հրատ., 2008, էջ 22:

ոչ հատվածները: Հասակ առնող պատանուն մշտապես մտահոգել է դժվար ապրող ընտանիքի նյութական վիճակը, և նա ինքն էլ փորձել է սեփական նպաստը բերել բարեկեցությանը. դպրոցական արձակուրդների ժամանակ արդեն 14-ամյա տղան սկսում է աշխատել հայ առևտրականների մոտ: 1929-ից էլ ստանձնում է Բուխարեստի հայոց վարժարանում օգնական ուսուցչի և քարտուղարի պաշտոնը՝ զուգահեռաբար շարունակելով ուսումնառությունը նույն վարժարանում: 1931-1932 թթ. ուսումնական տարում Լևոն-Կարապետը հաջողությամբ հաճձնում է Բուխարեստի պետական համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետի ընդունելության քննություններն ու ընդունվում համալսարան: Այնտեղ նա ընտրում է «մանկավարժություն, հոգեբանություն և հասարակական գիտություններ» մասնագիտացումները: Համալսարանը խոր ազդեցությունն է ունենում երիտասարդի մտավոր ունակությունների բարձրացման, մտահորիզոնի ընդլայնման, հետաքրքրությունների բացահայտման և գիտամանկավարժական հմտությունների ձևավորման բնագավառներում. նա ուսումնասիրում է հին ու նոր աշխարհի բազմաթիվ իմաստասերների աշխատությունները, անհագաբար կարդում հայրենի և օտար գեղարվեստական գրականությունը, ծանոթանում հոգեբանական տարբեր դպրոցներին ու զանազան արվեստներին... Ուշարժան է, որ Լևոն-Կարապետը հենց այդ շրջանում էլ աչքի է ընկնում խոհուն ու վառ անհատականությամբ. նա Բուխարեստի Հայ ուսանողների միության գործուն անդամներից էր, ինչպես նաև եռանդուն աշխատակիցը Հայ մշակույթի բարեկամների ընկերակցության և Հայ մատենադարանի[10]: Ուշիմ երիտասարդը հաճախում է նաև պոլսահայ մտավորական Հակոբ Սիրունու ղեկավարությամբ կազմակերպված գրաբարի դասընթացներին: Նա 1936-ին ավարտում է Բուխարեստի պետական համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետը, իսկ 1937-ին՝ նույն համալսարանի գործնական մանկավարժության բաժինը՝ պաշտպանելով «Կարգապահության հարցը մանկավարժության մեջ» ավարտաճառը և ստանալով ուսուցիչ-մանկավարժի վկայական[11]: «Համալսարանում ունեցած եմ որակյալ եւ իրապես գիտական ռումինացի դասախոսներ: Բարձր մակարդակի վրա էր ռումինական համալսարանը»[12],- հետագայում սիրով պիտի հաստատեր Վազգեն Ա վեհափառը: Եվրոպական համալսարանում բազմակողմանի և խոր

---

[10] Տես **Վազգեն Ա Հայրապետ Հայոց**, Կենսագրություն, կոնդակներ, քարոզներ. Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1958, էջ 11:

[11] Տես Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԶ, Վազգէն Ա Պալճեան Ամենայն Հայոց Կաթողիկոս (1908-1994), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, «Մուղնի» հրատարակչություն, 2008, էջ 22:

[12] «Ոգեղեն կյանք», Աշխատասիրությամբ Հ. Պապիկյանի և Զ. Գալստյանի, Ս. Էջմիածին, 1998, էջ 8:

գիտելիքներ ստացած է Լևոն-Կարապետ Պալճյանը մտնում արդեն մեծ կյանքի համալսարաններ՝ կարոտյալ իր հայրենակիցներին անմնացորդ նվիրաբերվելու անխախտ ուխտով ու անանձնական զգացումներով...

Դեռևս միջնակարգ կրթություն ստանալուց անմիջապես հետո՝ 1929-ից մինչև 1943-ը, Լևոն-Կարապետն անցել է ուսուցչական բեղմնավոր աշխատանքի Բուխարեստի հայ վարժարանում: Ունենալով մանկավարժին հատուկ նրբին հոգեբանություն, համբերատարություն և բացառիկ ծիրք՝ նա ուսումնառության ամբողջ ընթացքում ամբարած գիտելիքները ծառայեցրել է Ռումինիայում ապրող հայ համայնքի կրթական գործի իրականացմանը: Իսկ այդ շրջանում ռումինահայ սերնդի մեջ հարյուրների էր հասնում այն անհատների թիվը, ովքեր աշակերտի երախտագիտության ամենաքնքուշ զգացմունքներով են կապված եղել իրենց սիրելի ուսուցչին: Այդ իրողությունը պատահական չէ. ժամանակակիցների հիշողություններում և վկայություններում բեկոր առ բեկոր աստիճանաբար հավաքվում ու հառնում է բարձր մտավորականի և ճշմարիտ ուսուցչի վեհ կերպարը՝ մարդու, որն իր շուրջն ստեղծում էր պատկառանքի ու անզուսպ հիացմունքի ջերմ մթնոլորտ և վայելում էր համընդհանուր հեղինակություն: Թե վարժարանում և թե նրա պատերից դուրս Պալճյան մանկավարժի ներկայությունն առաջացնում էր մի տեսակ ոգեղեն խանդավառություն, քանի որ նա ոչ միայն ուսուցիչ էր, այլև բարեգութ հայր շատերի համար: Ինչպես հիշում են նրա նախկին սաները, պարոն Պալճյանը հոգատար էր բոլոր աշակերտների նկատմամբ, բարի էր, հաճախ՝ ներողամիտ, բայց և խիստ էր ու պահանջկոտ. ծույլերին երբեք զիջումներ չէր անում, իսկ հարուստ ընտանիքի երեխաներին հանուն հարստության բարձր գնահատականներ չէր շռայլում[13]: Ստորև ներկայացնենք նրա բազմաթիվ աշակերտներից միայն մեկի՝ հայոց թատրոնի խոշորագույն դերասանուհի Վարդուհի Վարդերեսյանի թողած հուշաբեկորն իր ուսուցչի մասին: Դերասանուհին մի առանձին ակնածանքով է հիշում սիրելի ուսուցչին և պատմում հետևյալը. «Բուխարեստի «Միսաքյան-Քեսիմյան» հայկական ազգային վարժարանում իմ սովորելու տարիներին, պարոն Պալճյանը մի քանի առարկա էր ավանդում. Ռումինական ժողովրդի պատմություն, աշխարհագրություն, ռումիներեն լեզու, իսկ հետագայում, եւ քիչ ավելի ցածր դասարաններում մի որոշ ժամանակ էլ, կարծեմ, կրոն ավանդեց: Ինձ պատմել են, որ նա ավանդել է նաեւ մարմնամարզություն: Լավ մանկավարժ լինելու հետ մեկտեղ, պարոն Պալճյանը լավ հոգեբան էր, եւ պատահական չէր, որ նա հետագայում պետք է հենց «Հոգեբանություն» առարկան

[13] Տե՛ս Սարել գաիքի տեսիլքով (Հուշեր Վազգեն Վեհափառի մասին), Ս. էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, 2008, էջ 34-35:

դասավանդեր: Հիշում եմ այսպիսի մի դեպք, դպրոցում կորել էր ուսուցիչներից մեկի դրամապանակը եւ այն գտնելը հանձնարարվել էր երկու ուսուցիչների, պարոն Մազմանյանին եւ պարոն Պալճյանին: Դասարան մտնելով, պարոն Մազմանյանն սկսեց գոռալ մեզ վրա, սպառնալ, հայտարարեց, որ անգթորեն կպատժի բոլորին, որ գողին ծեծելով «կիսամեռ կանի»: Իսկ որովհետեւ ես, չգիտեմ ինչու կաս-կարմիր էի կտրել, Մազմանյանը որոշեց որ գողը ես եմ, եւ իր զայրույթի ամբողջ մուլուցքը թափեց ինձ վրա... Չգիտեմ թե ինչով կվերջանար այս ամենը, եթե այդ ժամանակ դասարան չմտներ պարոն Պալճյանը: «Պարոն Մազմանյան,- իրեն հատուկ հանդարտ եղանակով սկսեց նա,- մեք տանջի աղջկան: Դրամապանակը գտնվել է: Այն վերցրել էր աշակերտներից մեկը եւ արդեն վերադարձրել է»: «Ի՞նչպես,- զարմացավ պարոն Մազմանյանը,- երեւի մի լավ ծեծել եք այդ անպիտանին, այո՞»: «Ամենեւին,- շարունակեց պարոն Պալճյանը,- դասարանում հայտնեցի տեղի ունեցած դեպքի մասին, բացատրեցի որ գողությունը անպատվաբեր, վիրավորական արարք է, եւ հորդորեցի որ վերցնողը վերադարձնի դրամապանակը: Այդպես էլ եղավ»: «Իսկ ո՞վ էր այն վերցրել»,- զայրույթով հարցրեց Մազմանյանը: «Այդ արդեն կարիք չկա որ իմացվի»,- պարոն Պալճյանը հանդարտ ժպտաց»[14]:

Վազգեն Ա հայրապետը նույնպես ջերմությամբ է մտաբերում իր ուսուցիչ եղած տարիները. «Ես նաև երկար տարիներ եղած եմ ուսուցիչ Բուխարեստի հայոց վարժարանում: Ավանդած եմ տարբեր դասեր, պետք է ասեմ, մեծ մասամբ ռումինարեն լեզվով, որովհետև ես լավ էի տիրապետում այդ լեզվին: Ավելի քան տասներկու տարի եղած եմ ուսուցիչ: Շատ սիրում էի իմ ասպարեզը, սիրում երեխաների միջավայրում լինել և երջանիկ էի լինում, երբ տեսնում էի նրանց մեջ զարթոնքը մտքի, հոգու, կարողությունների: Հպարտանում էի մանավանդ այն աշակերտներով, որոնք մասնավոր կերպով օժտված էին և փայլուն կերպով հանձնում էին իրենց քննությունները»[15]:

1937-1942 տարիների ընթացքում որոշակի մտերմություն էր ստեղծվել ռումինահայ թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրապյանի և երիտասարդ ուսուցչի միջև: Այդ ընթացքում վերջինիս հետաքրքրություններն առավել սկսեռվում են դեպի հայոց եկեղեցին. սկսում է առանձնակի ուշադրություն դարձնել հայ եկեղեցու պատմությանը, եկեղեցու կանոնադրությանն ու դրա զարգացման պատմությանը: 1942-ին՝ Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրապյանի վախճանվելուց հետո, թեմական աթոռը մնում է թափուր, և ռու-

---

[14] Ապրել գաիքի տեսիլքով (Հուշեր Վազգեն Վեհափառի մասին), Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008, էջ 34-35:

[15] «Ոգեղեն կյանք», Աշխատասիրությամբ Հ. Պապիկյանի եւ Զ. Գալստյանի, Ս. Էջմիածին, 1998, էջ 9:

մինահայ համայնքում հայապահպանմանն ուղղված իր գործունեության համար աչքի ընկած համալսարանավարտ ուսուցիչը հայրենակիցների կողմից ընտրվում է որպես արժանի հաջորդ: Ինչպես Հին կտակարանյան հայտնի պատմության մեջ է Ահարոնը կանչվում՝ լինելու քահանա Աստծու ժողովրդին, այնպես էլ Լևոն-Կարապետ Պալճյանը՝ «Ձայն բազմաց՝ ծայն Աստուծոյ»: Եվ մեզ բոլորիս հայտնի է, որ քահանայության պատիվը աստվածային է: Այս առիթով ահա ինչ էր հետագայում հիշելու Վազգեն Ա Վեհափառը. «Հայ գաղութի ղեկավարները (աշխարհիկ ղեկավարները) դիմեցին ինձ, որ ես հոգևորական դառնամ, քանի որ տեղացի էի, լավ ռումիներեն գիտեի ամեն ինչով և փնտրում էին մեկը, որ այդպիսին լիներ, որ դժվար կացություններից դյուրավ դուրս գա: Ես անակնկալի եկա և մերժեցի, ասելով, որ հոգևորական լինելու պատրաստ չեմ, դժգոհ չեմ իմ ասպարեզից, սիրում եմ ուսուցչությունը, ի վերջո այդ պատասխանատու գործի համար երիտասարդ եմ, անփորձ եմ և այլն, և այլն: Երևակայեցեք, վեց ամիս տևեցին, այսպես ասենք, այդ խոսակցությունները, ինձ վրա բարոյական ճնշում գործադրվեց, թե՝ ազգի շահերի համար պետք է իմ համաձայնությունը... Վերջի վերջո, երևակայեցեք, համակերպվեցի և ընդունեցի հոգևորական դառնալու այդ առաջարկությունը»[16]:

Ուշագրավ է, որ երիտասարդ ուսուցչի մայրն սկզբում ընդդիմացել է մինուճար որդուն կուսակրոն հոգևորական դարձնելու առաջարկին, բողոքել գաղթօջախի ղեկավարներին, և դա հասկանալի է. չէ՞ որ նա էլ աշխարհի բոլոր մայրերի պես երազել է որդուն տեսնել ընտանեկան երջանկության մեջ՝ շրջապատված հոգատար կնոջով ու արժանավոր երեխաներով: «Թեմական խորհուրդը միաձայն որոշում տվավ ինձ կուսակրոնության անցնելու,- տարիներ հետո հիշում է Վեհափառը,- մայրս, որ միակ զավակի ընտանիք կազմելը կերազեր, ելավ-գնաց ազգային պետերու քով՝ բողոքելու: «Տիկին Սիրանուշ,- ըսած էին,- ազգին ծառայելու խնդիր կա, պարոն Կարապետեն ավելի հարմարը չենք գտներ»: Մայրս վրդովված պատասխանած էր. «Թող ծեր որդին երթա ազգին ծառայելու: Դուք քանի մը հատ ունիք, ես միայն մեկը ունիմ»[17]: Աստվածամեծար ու հայրենասեր տիկինն ի վերջո տեղի է տալիս, և Աստծու կանչով և իր ժողովրդի ընտրությամբ 1943-ի սեպտեմբերի 30-ին Լևոն-Կարապետ Պալճյանն Սթենքում՝ Տուրդուդի-Ֆիքսի հայկական Ս. Կարապետ եկեղեցում, Հունաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Կարապետ արքեպիսկոպոս

---

[16] «Ոգեղեն կյանք», Աշխատասիրությամբ Հ. Պապիկյանի եւ Զ. Գալստյանի, Ս. Էջմիածին, 1998, էջ 12-13:

[17] Կապուտիկյան Սիլվա, «Նա իր գոյությամբ սրբացնում էր մթնոլորտը», Հուշապատում, Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2004, էջ 47:

Մազլումյանի կողմից ձեռնադրվում է քահանա՝ վերանվանվելով Վազգեն[18] ու ստանալով նաև մասնավոր վարդապետական չորս աստիճաններ: Վարդապետի կնքահայրությունն ստանձնում է թեմական խորհրդի անդամներից Ռուբեն Իսրայելյանը: Ձեռնադրություն ստանալուց անմիջապես հետո Տ. Վազգեն վարդապետը Բուխարեստի՝ իրեն ուղեկցող հայոց եկեղեցու ավագերեց Տ. Իգնատիոս ավագ քահանա Քիլիմյանի ընկերակցությամբ մեկնում է Սուչավայի հայոց Ս. Հաճկատար պատմական վանք, որտեղ էլ անցկացնում է իր քառասունքը՝ Տ. Գնել ավագ քահանա Մանտալյանի հոգևոր հովանավորության տակ: Աղոթքի, պահեցողության և ծոմապահության քառասնօրյա ժամանակաշրջանից հետո հոգեպես պայծառացած ու բարձրացած, լցված իմաստության լույսով և իր կոչման գիտակցությամբ՝ վերադառնում է Բուխարեստ՝ ստանձնելու ռումինահայ թեմի նախ՝ առաջնորդական փոխանորդի և ապա՝ թեմական առաջնորդի պաշտոնը: Տ. Վազգենն իր առաջին սուրբ պատարագը մատուցում է Բուխարեստի Ս. Հրեշտակապետաց եկեղեցում՝ հոծ բազմության ներկայությամբ: «Քառասուն օրից հետո վերադարձա Բուխարեստ,- պատմում է սրբազանը: 1943 թ. նոյեմբերի 28-ին Բուխարեստի հայոց Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցում, խուռն բազմության ներկայությամբ, ես իմ անդրանիկ պատարագը մատուցեցի: Բուխարեստի ողջ հայությունը ներկա էր. ոչ միայն եկեղեցին էր լիքը, այլև ամբողջ շրջապատը»[19]:

---

[18] Իր «Վազգեն» անվան կապակցությամբ Վեհափառը 1986-ի փետրվարի 12-ի հայացազուցի ժամանակ պատմել է հետևյալը. «Երբ արդեն հաստատապես որոշել էի հոգևորական դառնալ և պատրաստվում էի մեկնել Հունաստան ձեռնադրելու համար, կնքահայրս, Ռուբեն Իսրայելյանը մի անգամ հարցրեց. «Լևոն, վարդապետ ձեռնադրվելու ժամանակ, մեր եկեղեցու ավանդական կանոնակարգի համաձայն, քո անունը պետք է փոխվի: Դու ի՞նչ անուն ես նախընտրել քեզ համար»: Պատասխանեցի, որ որևէ անուն ինձ համար տակավին չեմ ընտրել և որ այդ ամենը թողել եմ Կարապետ Մազլումյանի հայեցողությանը: «Ո՛չ, ո՛չ, այդպես չի կարելի,- ինձ հակաճառեց կնքահայրս,- մի անուն քեզ համար մենք պիտի որոշենք և նա արդեն մտածել եմ այդ մասին: Եթե ես խնդրեմ, դու քեզ համար չե՞ս վերցնի վանեցի նշանավոր ազգային-ազատագրական գործիչ, բանաստեղծ, երգահան Վազգեն Տերոյանի «Վազգեն» անունը: Իմ առաջարկած այս անձնավորությունը այնպիսի համազգային մեծություն է և այնքան լայն ճանաչում ու հեղինակություն ունի ինչպես Հայաստան աշխարհում, այնպես էլ սփյուռքում, որ քեզ համար նրա անունը կրելը շատ գեղեցիկ կդիտվի: Եթե դու սկզբունքորեն համաձայն լինես, ես կկարողանամ համոզել տ. Կարապետին»: Առաջարկությունը սկզբում տարօրինակ թվաց ինձ, քանզի «Վազգեն» անունը անսովոր էր և մեր հոգևորական իրականության մեջ նախօրինակը չունեցող, բայց կնքահորս մերժել չէի կարող: Տ. Կարապետ Մազլումյանն էլ ինչ-որ անընդունելի ու արտառոց բան չգտավ այդ անվան մեջ և վարդապետական ձեռնադրության ժամանակ ինձ այդպես էլ կնքեց «տեր Վազգեն»: Ավելացնեմ նաև, որ մանավանդ 1955 թվականից հետո, երբ ես, կամքն Աստուծո, ընտրվեցի Ամենայն Հայոց Կաթողիկոս, ինձ անվան հետևությամբ, մեկից ավելի եղան «տ. Վազգեն» անունով ձեռնադրված հոգևորականներ»:

[19] «Ողեղեն կյանք», Աշխատասիրությամբ Հ. Պապիկյանի եւ Զ. Գալստյանի, Ս. Էջմիածին, 1998, էջ 14:

Նա նաև հիշատակում է պատարագից հետո տեղի ունեցած ճաշկերույթը, որին մասնակցել է իր մտերիմներից մեկը՝ Դրաստամատ Կանայանը՝ հայտնի զորավար Դրոն[20]: Ռումինիայի հայոց թեմական պատգամավորական ժողովը Վազգեն վարդապետ Պալճյանին նույն օրն էլ ընտրում է առաջնորդական տեղապահ: Իսկ դեկտեմբերի 1-ին արդեն ռումինական կառավարության պետական հրովարտակով հաստատվում է նրա ընտրությունը՝ առանց խնդիրներ առաջանալու, որովհետև, ինչպես Վազգեն Ա հայրապետն էր կարծում, ռումիներենի քաջիմացությունն ու «տեղացի լինելը» մեծապես օգնում՝ են իրեն:

Վազգեն վարդապետ Պալճյանն ուներ ուսման անհագ ծարավ և ծեռնադրությունից անմիջապես հետո Բուխարեստի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետում գրանցվում է որպես ունկնդիր և 1943-1944 թվականներին մասնակցում այնտեղի դասընթացներին: Նա իր ստանձնած պաշտոնի և գործի բարձր գիտակցությամբ ու մեծ պատասխանատվությամբ է անցնում քարոզչական և հովվական ծանր, սակայն պատվաբեր գործին: Նրա ուսերին են ծանրանում Ռումինիայի հայությանը հայ պահելու դժվարին գործն ու բեռը, որը տանելու համար անհրաժեշտ էին ուժերի գերլարում, անսահման սեր ու անկեղծություն և ինքնամոռացության հասնող հոգեկան անմնացորդ նվիրում: Տ. Վազգեն վարդապետը, անդուլ եռանդով փորձում է թեմում բարձրացնել հայ հավատացյալների հոգևոր-բարոյական դաստիարակությունը, ցույց տալ ոգու կերտման իսկական ուղին, և այդ նպատակների իրականացմանը մեծապես նպաստում է 1945-ին Բուխարեստում նրա լույս ընծայած «Մեր պատարագը» գրքույկը:

Երկրորդ աշխարհամարտի դժնդակ տարիներին երիտասարդ հոգևորականին մտահոգում են ոչ միայն գաղթօջախի, այլև ֆաշիստական Գերմանիայի կողմից Ռումինիայում պահվող շուրջ հազար հայ ռազմագերիների կացությունն ու նրանց բարոյահոգեբանական վիճակը: Հայր Վազգենին դժվարությամբ հաջողվում է ստանալ իշխանությունների՝ հայ գաղթօջախի կողմից ազգակից ռազմագերիներին պարենով օգնելու և քահանաների այցելությունները ճամբար ապահովելու թույլտվությունը: Այդ ծանր օրերից մեկի մասին թանկագին հուշ է թողել արձակագիր Խաժակ Գյուլնազարյանը: Վերջինս, որ այդ շրջանում եղել էր հարյուրավոր ռազմագերիներից մեկը, իր վավերական պատմվածքներից մեկում («Տեր հոր քարոզը») հավաստում է հետևյալը. համակենտրոնացման ճամբարում, ուր թշնամին շարունակ պարծենում է, ստում, աշխատում փշրել հավատդ, թե «ռուս՝ կապուտ, ռուս՝ կապուտ, շուտով կռիվը կվերջանա իմ հաղթանակով», ուր «մեկը խելագարվում է, մեկը թուլացած

[20] Տե՛ս նույն տեղում, էջ 15:

բռունցքն է կծկում ու հուսահատ ոստյունով թռչում հերթապահ սպայի վրա և գնդակահարվում...»[21], ահա այդ մղձավանջում մի օր անսպասելի լուր է տարածվում, որ վաղը մի հայ քահանա է այցելելու ճամբար: Հյուծված, հոգեկան ուժն ու կորովը օրըստօրե կորցնող ռազմագերիները չեն հասկանում հոգևորականի այցելության նպատակը, իսկ առավել թերահավատներն էլ սկզբում կասկածում են, թե «երևի գալիս է մեզ հաղորդ տալու, որ անհաղորդ չմեռնենք»[22]: Տեր հոր այցելության նպատակը, սակայն, ինչպես պարզվում է հաջորդ օրը, բոլորովին այլ էր՝ ճամբարի պետի և մինչև ատամները զինված հսկիչների աչալուրջ հսկողության ներքո ծածուկ խրախույս կարդալ ազգակիցներին, այն է՝ չընկճվել, չդավաճանել այն բանակին, որի զինվորներ են. «Տղաք, ի սեր Քրիստոսի չխնդաք, ինձի ալ կկորցնեք, ձեզի ալ... Խնդիրք մը ունիմ միայն, այժմ և միշտ հավիտյանս հավիտենից ամմե՜ն... Տղաք, աստծու սիրույն, այս շուներուն չըլլա թե հավատաք, չըլլա թե հավատնիդ փոխեք: Մենք պզտիկ ազգ մըն ենք, Վասակ չըլլաք, ամմե՜ն: ...Չըլլա թե կամավոր գրվիք, ձեր զորավարները, չեմ ուզեր ազգերնին տալ, որ ասոնք չհասկնան, արդեն կհաղթե՜ն կգա՜ն, ամմե՜ն... Մեծ գետին քովի քաղաքը, հոն ուր հայ գաղութ մ'ալ կա, ձերոնք առեր են, առե՜ր են: Մնաք խաղաղությամբ, այժմ և միշտ հավիտյանս հավիտենից ամմե՜ն...»[23]: Այս յուրօրինակ քարոզը կարդացող հոգևորականը Հայր Վազգենն էր՝ հայոց ապագա կաթողիկոսը:

Բարդ ու հետաքրքիր ճակատագիր է վիճակվել բազմավաստակ գիտնական Ասատուր Մնացականյանի «Գիրք՝ գրված փշալարի ճանկերում» գեղարվեստական գործերի (հուշեր, դիմանկարներ, խորհրդածություններ, բանահյուսական մշակումներ ու ինքնուրույն բանաստեղծություններ) ձեռագիր մատյանին՝ չնչին բացառություններով գրված ֆաշիստական համակենտրոնացման ճամբարում: Եվ Աստծու նախախնամությամբ այդ ընթերցողը դառնում է ռումինահայության հոգևոր հովիվ տեր Վազգեն վարդապետ Պալճյանը, որը, ինչպես արդեն վկայվեց վերոշարադրյալում, գաղտնի թույլտվություն էր ստացել այցելել այդ երկրում գտնվող հայ գերյալներին: Դողդողացող ձեռքով, բոլորից գաղտնի Վազգեն վարդապետին հանձնելով խունացած թղթերի վրա գուրգուրանքով գրած իր նվիրական տողերը՝ հեղինակը խնդրում է՝ իր հնարավոր մահվան դեպքում ձեռագիրը մի հնարով հասցնի հայրենիք՝ իր տիկնոջը՝ Սարգոյին, իսկ եթե ինքը հրաշքով կենդանի մնա, երախտագիտությամբ կայցելի նրան ու հետ կվերցնի: Կաշի ու ոսկոր դարձած ճամբարականը որտեղի՞ց իմանար, որ կյանքի խաչուղիներից մեկում իրեն հանդիպած վարդապետն

---

[21] Տե՛ս Գյուլնազարյան Խ., «Ոսկի որոնողները», Երևան, 1964, էջ 241:
[22] Տե՛ս նույն տեղում, էջ 242:
[23] Նույն տեղում, էջ 244:

Աստծու նախախնամությամբ պիտի մի օր օծվեր Նորին Սուրբ Օծություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Տեր Տեր Վազգեն Ա անունով, իսկ ինքն էլ պատերազմի ավարտից հետո գերիների փոխանակման բարեհաճ դիպվածով վերադառնալու է իր ժողովրդի, իր հարազատների մոտ:

Հանդիպումը կայանում է Մայր Աթոռում, սակայն, հանգամանքների բերումով, հեղինակն առավել ապահով է համարում փորձությունների միջով անցած իր մատյանը նվիրաբերել Ս. Էջմիածնին: Միևնույն է, տպագրելու մասին խոսք անգամ լինել չէր կարող և միաժամանակ բացում վտանգներով հղի էր գերության մեջ գրած մատյանը տանը պահելը: 1983-ի հունիսին, երբ իր մահկանացուն է կնքում Աստուր Մնացականյանը, Մայր տաճարում այդ առթիվ տրվում է պատարագ, որին ներկա են լինում հանգուցյալի հարազատները, ընկեր-բարեկամները, գրողներ, գիտնականներ...[24] Այդ ժամանակ Վեհափառ հայրապետը մեկ շաբաթով հիշյալ մատյանը հանձնում է նրա որդուն՝ Մ. Մնացականյանին՝ լուսապատճենը հանելու և ըստ ցանկության տնօրինելու, բայց ձեռագիրը՝ վերստին տաճարի ձեռագրատուն վերադարձնելու պայմանով: Հայաստանի անկախացումից տարիներ անց Աստուր Մնացականյանի հարսի՝ Սինա Մնացականյանի ջանքերով փոքր-ինչ ուշացումով, հրատարակվում է Վազգեն Վեհափառի «փրկած» հայ նախկին ռազմագերու աշխատանքը: Երիտասարդ Պալճյան վարդապետի անուրանալի արժանիքների շնորհիվ հայ գաղթօջախի՝ օր օրի ակնառու դարձող հոգևոր վերելքը, ինչ խոսք, չէր կարող չնկատվել հայրենակիցների կողմից, որի պերճախոս վկայությունը ռումինահայ թեմական խորհրդի 1945 թ. հունվարի 3-ի թվագրությամբ զեկույցն էր՝ ուղղված Գևորգ Զ կաթողիկոսին. «Տ. Վազգեն վարդապետը կարճ ժամանակվա ընթացքում յուրացրեց բարձրաստիճան հոգևորականի համար գիտնալիք անհրաժեշտ եկեղեցական արարողությունները, իսկ իր հեզահամբույր և պարկեշտ բնավորությամբ, իր ջանասիրությամբ և իմաստալից ու հանրությանը մատչելի քարոզներով շահեցավ թեմիս հայության խորին հարգանքն ու սերը: ...Զեկուցանելով այս բոլորը, թեմական խորհուրդը դիմում է Ձեզ Ամենապատվության՝ խնդրելով Ձեզ՝ բարեհաճեիք վավերացնել թեմական խորհրդին կատարած քայլերը և հաստատել Տ. Վազգեն վարդապետ Պալճյանին որպես առաջնորդական տեղապահ ռումինահայ թեմի»: Թեմական խորհուրդը նույն թվականի մայիսի 29 թվակիր նամակով Ամենայն հայոց կաթողիկոսին մեկ անգամ ևս վստահեցնում է. «Տ. Վազգեն վարդապետը, շնորհիվ իր բարձր կարողությունների, շահեց ամբողջ ռումինահայության

---

[24] Տես **Մնացականյան Ան.**, Գիրք՝ գրված փշալարի ճանկերում, Երևան, «Նաիրի» հրատ, 1997, էջ 4:

հարգանքն ու սերը և արժանացավ պետական շրջանակներու գնահատման, իսկ թեմական խորհուրդս շատ գոհ է, որ նորան վիճակվեցավ հաջող ընտրությամբ վաստակել թեմիս և Մայր Աթոռի համար մի արժանավոր սպասավոր»: Վազգեն վարդապետ Պալճյանը Ռումինիայում իր ամբողջ ուժն ու կարողությունը ներդնում է ռումինահայ թեմի եկեղեցական ու ազգային-հայրենասիրական աշխատանքների ծավալմանը: Նրան կարելի էր հանդիպել ամենուր՝ թե եկեղեցում քարոզելիս և թե դասախոսելիս, ուր հայրենակիցներին ու օտարներին ծանոթացնում էր հայ բազմադարյան մշակույթին: Եվ այդ բոլորանվեր աշխատանքի ու ազգին նվիրվածության համար էլ 1948-ին ռումինահայ թեմի պատգամավորական ժողովը Վազգեն վարդապետին ընտրում է առաջնորդ, իսկ Գևորգ Զ Ամենայն հայոց կաթողիկոսը նույն թվականի մայիսի 23-ին՝ կիրակի օրը, Ս. Էջմիածնի Մայր տաճարում իր հայրապետական օրհնությամբ Վազգեն վարդապետին շնորհում է ծայրագունության աստիճան: Չի ուշանում նաև հոգևոր հաջորդ՝ էլ ավելի բարձր աստիճանը. երեք տարի հետո՝ 1951 թ. հուլիսի 3-ին, Գևորգ Զ-ն ռումինահայ ազգային-եկեղեցական իշխանությունների և ժողովրդի համաձայնությամբ Վազգեն ծայրագույն վարդապետ Պալճյանին շնորհում է եպիսկոպոսական աստիճան: Եվ սա դեռ բոլորը չէր. 1955-ի սեպտեմբերի 30-ին Մայր աթոռ Ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովի երկրորդ նիստում հանդիսավոր պայմանների ներքո Վազգեն եպիսկոպոս Պալճյանը ձայների գերակշիռ առավելությամբ[25] ընտրվում և դառնում է Ամենայն հայոց 130-րդ կաթողիկոս, հետայսու՝ Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն հայոց:

The Activity of the Catholicos of All Armenians Vazgen A in Romania

The article focuses on the midcatholicosian activity carried out by Bishop Vazgen Palchyan in Romania during World War Second. There is also a small narration about the life and activity of Catholicos's parents. The article also brings citations from the book by A. Mnatcakanyan, where it is told how the future catholicos could safe and pass to our generetions works by Mnatcakanyan when he was a hostage and was given a visit by the future Catholicos in Romania.

---

[25] Վազգեն եպիսկոպոս Պալճյանն ստանում է 125 կողմ, իսկ մյուս թեկնածուն՝ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Գարեգին արքեպիսկոպոս Խաչատրյանը՝ 6 ձայն. 2 ձայն է ստանում Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը, 1-ական ձայն՝ համապատասխանաբար Հյուսիսային Ամերիկայի և Եգիպտոսի թեմերի առաջնորդներ Սամբրե արքեպիսկոպոս Գալֆայանն ու Սամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը և Երուսաղեմի Սրբոց Հակոբեանց միաբան Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը: Եվ մեկ ձայն էլ եղել է առանց նշման: Տես «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության», գիրք ԺԶ, Վազգեն Ա Պալճեան Ամենայն Հայոց Կաթողիկոս (1908-1994). Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, «Մուղնի» հրատ., 2008, էջ 24: